

թէ որ գտնուէր մէկը որ ինծի աս շը-
նորհքս ընէր որ իմ տեղս ջրհորը մըտ-
նար, մեծ սիրով ու չնորհակալութեամբ
10 ոսկի կու տայի իրեն : — Վարպե-
տորդի գողին աս խօսքերուն հաւտաց
բարեսիրտ գեղացին և սկսաւ փառք
տալ Աստուծոյ որ զինքը այսպէս մեծ
բարդի հանդիպուց ըսելով մոքէն, 10
ոսկին աւելի է քան թէ իմ կորսնցու-
ցած երկու կենդանիս, և ուրախու-
թեամբ մը կ'ըսէ մէկալին . Ես բարե-
կամ կը մտնամ քու տեղդ ջրհորը, բա-
ւական է որ խոստացած 10 ոսկին վը-
ճարես ինծի : Աս ըսելով մէկէն կը հա-
նէ զգեստները ու շուտով մը կը մտնէ
ջրհորը . և դեռ ջուրը չի հասած անդիէն
գողը կ'առնէ խեղճին զգեստները ու
կորսուի աներևոյթ կ'ըլլայ : Բարեսիրտ
մարդը ջրհորին մէջ կ'աշխատի, ամեն
ջանք կ'ընէ որ գոհարներով լի սնտուկը
գտնէ . բայց չեղած բանը ինչպէս ճարէ .
կը կանչէ, վեր կը նայի դուրսը եղած
գողին . Մնտուկդ ուր ձգեցիր, ուր կող-
մը ինկաւ . բայց պատասխան չիլսէր :
Վերջապէս արիւն քրտինք մտած դուրս
կ'ելլէ ջրհորէն . մէյժն ալ ինչ տեսնէ ոչ
զգեստը կայ և ոչ մարդը : Ան ատեն կար-
թըննայ միամիտ գեղացին ու կը սկսի
իր խեղճութիւնը լալ . բայց ինչ օգուտ,
բանը բանէ անցեր է . զգեստները, այ-
ծը և էշը, իրեքն ալ անխելք կերպով
կորսնցուց, ու ինքը մերկիկ ճամբան
մնաց : ինչ և իցէ գտնուեցան քանի մը
հոգի որ շապիկ ու տարատ մը տալով
հազցուցին խեղճ մարդը, որ գոնէ մերկ
տուն չերթայ :

ԿՈԾՆԻ

դամեզր երկայնք ունի, և 1 մ. 78 հրմ.
լայնք . կշիռն է 290 կրամ, որ ըսել
է 90 տիրէմ: Ունի 40 կամ 45 պատ-
կեր կամ կենդանագիր, և կը տպուի
8 իջով . իւրաքանչիւրը 13 սիւն, ո-
րով կ'ըլլայ ընդ ամենը 104 սիւն :

Տառերը 7 երրորդ կարգի են. ամեն մէկ
տողը իրը 9 բառ կը բովանդակէ, կամ
40 տառ. և որովհետեւ իւրաքանչիւր
սիւն 400 տող է, 104 սիւները կը
բովանդակեն 41, 600 տող, 374, 408
բառ, 1, 664, 000 տառ, առանց հա-
շուի առնելու պատկերները :

Այս չափերով կ'իմացուի որ ամենէն
մեծադիր և մեծաքանակ օրագիրը կ'ըլ-
լայ մինչև հիմա երևածներուն մէջ:
Թայւեզ օրագիրը որ մեծերէն մէկը կը
սեպուի, գաճաճ մը կը համարուի ասոր
քովը : Զի ըստ վերոյնշանակեալ չա-
փին, այս նոր օրագրին երկայնքը ըլլա-
լով 256 հարիւրորդամեղը և լայնու-
թիւնը 178, ամբողջ տարածութիւնը
կ'ըլլայ 45, 568 հարիւրորդամեղը քա-
ռակուսի, մինչդեռ թայւեզին միակ թեր-
թը ունի 5 704 հարիւրորդամեղը քա-
ռակուսի, և 14, 408, երբոր կրկնակ
թերթ մըն ալ տպելու ըլլայ, իբրև յա-
ւելուած : Գաղղիացւոց Ազգարար (Mo-
niteur) օրագիրը ունի միայն 6, 570
հարիւրորդամեղը քառակուսի :

Այս մանր պարագայից վրայ աւել-
ցունեմք նաև այս, որ օրագրիս օրա-
կան շարողէքը պիտի արժէ 1, 200
ֆրանգ, ամսականը 36,000 ֆր., տա-
րեկանը 432,000 : Խակ եղած թերթե-
րուն թիւը և ծակարը իրեն ընկերագիր-
ներուն թիւէն կը կախուի կամ գտած
ընդունելութենէն :

Տպած հատուածներուն նիւթերն
են մատենագրականք, արհեստականք
և ձեռնարուեստականք : — Խակ պատ-
կերները են կենդանագիրք, տեսա-
րանք, մեքենացից ձեեր, և այլն :

Օրագրաց հրէշը . — Ճամանակիս
ամենէն մեծադիր օրագիրը սկսաւ Ա-
մերիկա երևիլ . Համաստեղք՝ ըսուած,
որուն տպագրողն է Գէորգ Ռոպէրդ, և
թերթին գինն իրը 2 ֆռ. 60 հար :
Այս թերթը 2 մեղը, 56 հարիւրոր-